

## **Մասնագիտական կողմնորոշումը քոլեջում և լիցեյում**

Ձեր երեխան մեծանալով կսկսի մտածել, թե ինչով է զբաղվելու հետագայում:

Նա կսկսի խոսել մասնագիտական կողմնորոշման մասին: Մասնագիտական կողմնորոշումը ապագայի մասին մտածելն է, որոշումներ կայացնելը, ուսումը շարունակելը և վերջապես մասնագիտության ընտրությունն է:

Իր ողջ ուսման ընթացքում Ձեր երեխան հարթում է դպրոցական և մասնագիտական կողմնորոշման ուղին:

Վեցերորդ դասարանից սկսած՝ նա կվերապատրաստվի և մասնագիտություններին կծանոթանա բոլոր դասավանդումների ժամանակ, կայցելի դպրոցական հաստատություններ, կմասնակցի բաց դռների օրերին, փորձաշրջան կանցնի ձեռնարկություններում և հանդիպումներ կունենա մասնագետների հետ:

Նա նաև կսովորի տեղեկություններ գտնել գրքերից, բրոշյուրներից և համացանցից:

Քոլեջում, երրորդ դասարանում, այնուհետև լիցեյում, ընդհանուր և տեխնոլոգիական երկրորդ դասարանում և ավարտական դասարանում Ձեր երեխան պետք է կատարի մասնագիտության ընտրություն, որպեսզի շարունակի իր ուսումը: Որպեսզի աջակցեք նրան ընտրության հարցում հաշվի առնելով նրա ծրագրերը և դպրոցական հաջողություններ Դուք պետք է խորհրդակցեք նաև դասավանդողների հետ, մասնավորապես՝ դասղեկի: Կարող եք խորհրդակցել նաև դպրոցի հոգեբանի հետ:

Կարևոր է հենց մասնագիտական ձևավորման փուլից առաջ սկսել մտածել և բազմաթիվ դիմումներ ներկայացնել, քանի որ ոմանք ծրագրերի, քննարկումների և քննությունների ընտրությունների կարիք կունենան:

Պետք է հավասարապես ուշադրություն դարձնել ամսաթվերին և հասանելի լինել, քանի որ հնարավոր է Ձեզ հետ կապ հաստատեն հետագա քայլերի մասին տեղեկացնելու համար:

Ընդհանուր և տեխնոլոգիական երրորդ և երկրորդ դասարաններում Ձեր երեխայի ուսման շարունակության համար Դուք պետք է փաստաթղթեր լրացնեք, որոնք թույլ կտան դասախոսներին Ձեզ ցուցումներ և խորհուրդներ տալ:

Երեխային որևէ լիցեյում գրանցելու համար գոյություն ունի տեղեկատվական ընթացակարգ, որը նրան կօգնի ընդունվել տվյալ ուսումնական հաստատություն՝ ըստ իր գնահատականի և բնակավայրի:

Արհեստ ուսանելու համար անհրաժեշտ է դիմել արհեստի ուսումնական կենտրոն և գործատու գտնել:

Ավարտական դասարանում Ձեր երեխան ինքնուրույն բարձրագույն կրթությունը շարունակելու ընտրություն է կատարում հետբակալավրիական ընդունելության ինտերնետային կայքի միջոցով:

Կողմնորոշվել՝ չի նշանակում կոնկրետ պահին ընտրություն անել: Վերապատրաստման բազմաթիվ ձևեր կան, և Ձեր երեխան կարող է մտափոխվել ուսման ընթացքում:

Կախված Ձեր երեխայի կարգավիճակից՝ կարող են ի հայտ գալ մի շարք ուսումնական պլանավորման հարցեր.

- Եթե դուք նոր եք Ֆրանսիա ժամանել և Ձեր երեխան ֆրանսերեն լեզվին չի տիրապետում, նա կարող է հատուկ կենտրոն հաճախել արագացված դասընթացներով ֆրանսերեն սովորելու համար,
- Եթե նա որևէ ուսումնական դժվարություններ ունի, կարող է հաճախել հատուկ ընդհանուր և մասնագիտական դասընթացների,
- Եթե նա հաշմանդամ է, ուսուցման համար անհրաժեշտ հատուկ սարքավորումներ կտրամադրվեն նրան լիցեյում և քոլեջում:

Դպրոցի նպատակն է Ձեր երեխայի հաջողությունները՝ ինչպես ուսումնական, այնպես էլ ավելի ուշ մասնագիտական կյանքում, հասցնել բարձր մակարդակի, որտեղից էլ սկիզբ է դրվում նրա ձևավորմանը և կողմնորոշմանը ողջ կյանքի ընթացքում: